

ԱԿԱԴ. Հ. ԱՃԱՌՅԱՆ

ՀԱՅՏՆԻ ՄԱՆԿԱՎԱՐԺ ՌԵԹԵՈՍ ՊԵՐՊԵՐՅԱՆ

(Ծննդյան 100-ամյակի առթիվ)

ՄԻՔԱՅԵԼ ՇԱՄՏԱՆՃՅԱՆ, «Խոհք և յուշք», «ԾԱՂԻԿ», 19 հունիսի 1904 թ.:

ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԴՈՒՐՅԱՆ, «Ռ. Յ. Պերպերյան», «ԱՄԵՆՈՒՆ ՏԱՐԵՑՈՒՅՑԸ», 1913 թ., էջ 9—15:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԱԳՅԱՆ, «Ռ. Պերպերյան», «ԿՈՉՆԱԿ», 1920 թ., էջ 166—169:

Կրթական նշանավոր գործիչ և դաստիարակ Ռեթեոս Պերպերյանը ծնվել է 1850 թվին, Պոլսի Խասգյուղ կոչված թաղում: Մի աղքատ սափրիչի որդի էր: 6 տարեկան էր, երբ կորցրեց իր հորը, և իր աղքատիկ մայրը իր ձեռքի աշխատանքով պահեց ու մեծացրեց նրան: Նախնական ուսումը ստացավ նույն թաղի Ներսիսյան դպրոցը, աշակերտելով հայտնի հայկաբան Գարագաշյանին: 16 տարեկան էր, երբ ավարտելով այդ դպրոցի դասընթացը, գնաց Ադրիանուպոլիս «առաջին դառն փորձն ընել հայ դաստատուութեան ապաշնորհ ասպարիզին մէջ»: Պերպերյանը երկար չմնաց Ադրիանուպոլսում. շուտով դարձավ Պոլիս և այստեղ նվիրեց իր անձը ազգային վարչական ու կրթական ասպարիզին. ընտրվեց երեսփոխան, վարեց զանազան ազգային պաշտոններ, բայց իր գլխավոր ասպարեզն եղավ Ազգային Ուսումնական Խորհուրդը, որին անդամ և հետո նախագահ ընտրվեցավ: 1876 թվին հիմնեց Պերպերյան վարժարանը, որի տնօրենը և գլխավոր ուսուցիչը եղավ ինքը: Այս դպրոցը թեև մասնավոր, բայց մեծ ծառայություն մատուցեց ազգին. նա դարձավ կրթության տաճար և ազգի վտանգավոր օրերին անդամ, իր տնօրենի խոհեմ քայլերի շնորհիվ պահելով իր գոյությունը, տվավ ազգին հարյուրավոր կրթված երիտասարդներ: Ուսումնական խորհրդի նախագահ եղած ժամանակ Պերպերյանը, իբրև արդեն հին ու փորձված ուսուցիչ, պատրաստեց «Կազմական կանոնագիր»ը, որը բոլոր արևմտահայ ուսումնարանների դպրոցական ծրագիրն եղավ:

1901 թվին Պերպերյանը տոնեց իր դպրոցի 25-ամյա հոբելյանը, որից մի քանի տարի հետո մեռավ ինքն էլ 1907 թվի ապրիլին, իր ամբողջ կյանքը նվիրելով ուսուցչական ասպարեզին:

Պերպերյանի գրական գործունեությունը սկսվում է 1870 թվին: Այս թվին նա գրել է «Աշուն», «Հեռի ի քէն», «Ակնարկ քո և ժպիտ» ոտանավորները և «Դպրոց» վերնագրով մի ատենաբանություն, որ խոսել է Խասգյուղի Ներսիսյան դպրոցի տարեդարձի հանդեսում: 1871 թվին Պերպերյանը մտնում է «Գործ» ընկերության «Արարատ» թերթի խմբագրության մեջ և այդտեղ հրատարակում է ավելի երկարաշունչ գործեր, ի միջի այլոց՝ Լամարտինի «Մահ Սոկրատայ» բանաստեղծության գրաբար ոտանավոր թարգմանությունը: Միևնույն ժամանակ աշխատակցում էր նաև «Մասիս», «Փող», «Մանզումէ» թերթերին: 1877 թվին հրատարակում է իր առաջին գրական հավաքածուն («Առաջին տերևք»), որի մեջ ամփոփում է մինչև այն ժամանակ հրատարակած կամ անտիպ զանազան գրությունները: Նրան հաջորդում են

հետզհետե «Երկու բանախօսութիւնք», «Կնոջ պատմութիւն», «Ժողովրդեան զրօսանքներ», «Մարդիկ և իրք», «Դրամ», «Դաստիարակի մը խօսքերը», «Խոճք և յուշք», «Դպրոց և դպրութիւն»:

«Առաջին տերևք»ը պարունակում է 33 ոտանավոր (որոնցից 4 թարգմանական), «Մահ Սոկրատայ», 10 ատենաբանություն, 2 պատմական տեսություն, մի թատերական քննադատություն՝ «Աղջկան մի օժիտն» կատակերգության վրա և մի քանի լրագրական բանավեճեր։ Բանաստեղծությունների նյութը գլխավորապես նկարագրական, սիրային և հայրենասիրական է։ Սրանց մեջ ամենից ավելի հաջողվածներն են «Լուսին», «Յոյս» «Ո՜հ, ո՛չ երկինք», «Աշուն, ի զուր»։ Չկա ավելի բարձր զգացմունք քան սերը։ Սերը ամենազոր է. նրա առաջ տարիները մոռանում են իրենց ընթացքը, կյանքի դառնությունները հալվում են, ամեհի ալիքները՝ ծաղիկ, փոթորիկները զեփյուռ են դառնում, կույսի ժպիտը խավարի մեջ լույս է ցոլացնում, սիրահարի ճակատին դիզված տխրության ամպերն են փարատում. Նա պատրաստ է կույսի հետ ամեն արգելք առաթուր կոխելու և կյանքի ասպարեզի մեջ անվեհեր առաջ խոյանալու.

Զի՞ փոյթ ինձ թէ ճեպընթաց ալիք ամաց թաւալին,
Եւ թէ գեղոյ՝ հասակի դիւրաթառամ վարդք խամրին.
Դո՛ւ ինձ անանց մանկութիւն,

Թէ ունիցիմ ես զքեզ, ծերացայց ո՛չ ես բնաւ,
Եւ հոգեակն իմ ի քո սէր ծծեսցէ զհիւթն անզբաւ,
Եւ ո՛չ անցցէ իւր գարուն։

Կո՛յս դու, ընդ քեզ առաթուր կոխեմ զամէն յանահ
սիրտ.
Քև թէ զալեօք արշաւեմ, ալիք ծաղկին ի ժմիտ,
'ւ անդունդք զոտս իմ գան գգվել.
Եւ թէ մրրիկ յառնիցէ որոտընդոստ, շանթարձակ,
Շիծաղիմ ես անվրդով, զի դու բաւես, ո՛ հրեշտակ,
Զամբուռս ի սիւգ փոխարկել։

Թէ ժմտիցիս դու, սէ՛րդ իմ, թէև լիցեմ ի մռայլ,
Ճաճանչք լուսոյ յիմ ճակատ հիւսեն պսակ
գեղափայլ,
Եւ ցնդին դէզք ամպրոպաց.
Եւ թէ շրթանցդ լարք ոսկիք հանցեն դաշնակս ի
խօսել,
Թէև լռին զերդ դամբան՝ զարթնու յոգւոջս անդ
յերեր
Ալիւն յուռոյ և ենեաց։

Թարմ երիտասարդ հասակում Պերպերյանը կորցնում է իր մորն էլ. դա լինում է մի անդարմանելի վիշտ նրա մատաղ սրտի համար. մոռանում է նա կույսի սերը. մոր ցավը հուսահատության մեջ է գցում նրան, որից չի ուզում մխիթարվել. և իրար հետևից նրան է նվիրում մի քանի ողբագին տաղեր.

Զի զի՞նչ առնել իցէ ինձ այլ աստ յերկրի,
Ուր չես դու, մա՛յր, ստուեր անկոյս ռօթակէզ,
Ուր արտասուաց պատէ զիս լոկ ծով աղի,
Եւ չես դու անդ զի շիթ մի քաղցր յայն կաթես։
Ճակատ մածեալ շիրմիդ ի վէմ սառնապաղ,
Մնացից ի լաց գերեզմանաց իբր ստուեր,
Մինչև մահու գթացեալ ի յիս՝ յիւր մանգաղ
Հնձեալ և զիս՝ հանգուսցէ քեզ առընթեր։

Գալիս է գարունը, դաշտերը ծաղկում են, բնությունն և մարդիկ ուրախ են. բայց այդ բոլորը ծաղր են թվում նրա տխուր սրտի համար. Նա արցունք միայն ունի աչքերում, հիշատակը սրտում, աղոթքը բերանին և մի շիրիմ ոտների սակ.

Ի զո՞ւր, գարուն, կ'ելնես հովտաց այցելու,
Ի զո՞ւր ծաղկեայ տաս լեռներուն պատմուճան,
Եւ ծեր բնութիւնն մանկացնէ շունչդ քու,
Թանձր է սրտին իմ պատեան։

Ո՜հ, քեզ նման օր մի և ես ժպտեցայ,
Եւ հաւտացի երջանկութեան ցնորքին,
Ժպիտն ընդհատ մեռաւ շրթանցս իմ վերայ,
Եւ ստուերք զիս պատեցին։

Ընդ վա՜յր իմ շուրջս յիմար աշխարհ կը խնդայ,
Եւ զո՞ւր հաճոյք զուարթ ճակտով զիս կոչեն.
Ա՜լ չեմ ապրիր երկրին համար, զիս ահա՛
Սև ուրուականք կը ձայնեն։

Աչերուս մէջ ալ արցունք մի ունիմ լոկ,
Քաղցր ու տխուր յիշատակ մի յիմ սրտին,
Բերնին վերայ լոկ անուն մի իբր աղօթք,
Եւ ոտքիս տակ մի շիրիմ...։

Տարիները անցնում են, տխրությունը ժամանակի թևերի վրա թռչում է և բանաստեղծը նորից իր քնարի թելերի վրա է առնում կույսի երգը.

Ո՜հ, ո՛չ, երկինք ամենևին չեն անգութ.
Թէ քստմնափուշ ուղի մ'է կեանք, բազմախութ,
Թէ ծով մ'է աշխարհ, թէ աչքն արցունք ունի յար,
Սոցա վերև սակայն մի շող մնայ վառ։

Վարդ մի Աստուած այդ փշոց մէջ է նետած,
Յայն ծով մրրիկ աստղ մի ձգէ զիւր ճաճանչ,
Եւ մի ժպիտ խառնի յարտօսր դառնագին,
Եւ այն կինն է, երկնից շնո՜րհ թանկագին։

Կը ժպտի կին, և հոգք թռչին յարագ թև։
Զոգին յոգին ծծել մի օդ երկնաշունչ.
Կը ժպտի կին, և հոգք թռչին յարագ թև.

Իսկ թէ մի կայծ քո աչերուն քաղցրալոյս,
Տխուր սրտի մ'ի խորն իյնայ, ազնի՜ւ կոյս,
Երկնածիծաղ ծագի կենաց անդ արև։

Ատենաբանությունները պտտվում են երեք գլխավոր նյութի շուրջը. դպրոց, կանանց հարց և հայրենիքի սերը։ Իր կյանքը ամբողջապես դպրոցի համար անց կացրած Պերպերյանը չի ճանաչում տիեզերքի մեջ մի ավելի մեծ հաստատություն, քան դպրոցը։

Դպրոցը ամեն ինչ է. «Դպրո՛ց, լուսոյ վառարան, քաղաքակրթութեան օրօրոց. քաղաքակրթութի՜ւն, այսինքն մարդկութեան բարձրացումն ի գագաթնակէտն իւր բարոյական մեծութեան և կատարելութեան, այսինքն տգիտութեան մահն, նախապաշարմանց ջնջումն, անհաւասարութեանց անհետումն, զրկանաց բարձումն, տկարին ու տառապելոյն դարաւոր հեծութեանց դադարումն, պատերազմի հրէշին անկումն, ազգաց և ազանց եղբայրական գիրկընդխառնումն, թշվառութեան կործանումն, ի մի բան, ազատութեան, հաւասարութեան և եղբայրութեան թագաւորութիւնն։ ...Դպրոց մի հիմնել փառաւոր է քան աշխարհակալաց համար յաղթութիւնքն, և մեծ քան աշխարհի մեծամեծաց բոլոր մեծագործութիւնքն...»։

Կանանց հարցում Պերպերյանը ունի ամենից առաջավոր գաղափարները. նա ճանաչում է կնոջը՝ իբրև մարդկության դաստիարակին. գեղարվեստը, ազնվական զգացմունքները և քաղաքակրթությունը կնոջ առաջ են ծնվել։ «Եթէ մարդն իւր նիւթական էութիւնն հօր և մօր կը պարտի միանգամայն, բարոյական մարդն գրեթէ լոկ մօր ձեռակերտն է, նրա ձեռին դրոշմն կը կրէ յիմքեան։ Կաղնին խոզկաղնոյն մէջ է, և ապագայ մարդկութիւնն որորանին մէջ, իսկ որորանն կնոջ հովանւոյն տակ»։ Իսկ եթե կինը ընկնում է շատ անգամ և կյանքի հորիզոնի վրա կատարում իր կոչման ու պատվին անարժան մի դեր, դրա հանցանքը ընկնում է այր մարդու վրա, որ զրկել է նրան կյանքի հաղորդակցությունից, սահմանափակել է նրա դերը քաղաքային ու քաղաքական աշխարհի մեջ, շատ տեղ նույնիսկ տունը նրա համար բանտ է դարձրել և վերջապես զրկել է նրան դաստիարակությունից։ Բա՛ց արեք աղջկանց դպրոցներ, տվե՛ք նրան փրկարար կրթությունը և կինը պիտի բարձրանա։

Հայրենիքի սիրո համար Պերպերյանը ունի շատ զգայուն շեշտեր. նա տեսնում է որ «Հայն աներակայց դէզ մի ունի իբրև հայրենիք... Արամ, Արտաշէս, Տիգրան, Տրդատ հայ էին, բայց դոքա լոկ յիշատակներ են այսօր անցելոյն անդնդին մէջ սուզած. դոցա հայրենիքն ծուէն ծուէն պատառուած է և իւրեանց սերունդն ընդ ոլորտս տիեզերաց ցիր և ցան, իբրու չորացեալ ծառի մի տերևներ զոր հողմն կը վարէ յուպէտ յուկամ։ Հայն այլ ևս ազգ չէ. Եկեղեցի մի է»։ Ընդունելով հանդերձ, որ այժմ հայության խարիսխը Եկեղեցին է, գտնում է որ այդ Եկեղեցին էլ այլևս ուժ չունի. նա գոյություն ունի միայն «եկեղեցւոյն պատերէն ներս»։ Հայ Եկեղեցին երկու տիպ միայն առաջ է բերում— կրոնամոլներ և անտարբերներ. կրոնամոլները փախչում են եվրոպական լուսավորությունից, որովհետև դա «հայակրոնական» չէ, իսկ անտարբերները, դեն գցելով կրոնական զգացումը, ազատ են զգում իրենց դեպի ազգն ունեցած ամեն տեսակ կապերից ու պարտականություններից։ Ուրեմն ի՞նչ է մնում մեր ազգի բոլոր անդամներր ազգի հետ սերտ կապելու համար։— «Ազգի լուսամիտ սէրն, ազգայնութեան զգացումն, ահա՛ ինչ որ կը պակսի ընդհանուր կերպիւ, այն որ միակ լծակն է անկեալ Հայութեան... ազգասիրութիւնն մեզ պէտք է առաւել քան այլում ումեք յազգաց. մեր բոլոր ոյժն մեր արեան մէջ միայն մնացած է. թէ մեր մոխրոյն մէջ այդ յետին կայծն ևս մարի, այն ատեն ա՛յլ պէտք է հրաժարիլ ամէն յոյսէ, պէտք է հրաժարիլ իբրև ազգ ապրիլ ուզելէ։... Թո՛ղ քահանայն հայրենիքն քարոզէ, թո՛ղ բանաստեղծն իւր քնարին վերայ հայրենիքն երգէ, թո՛ղ կոյսն և պատանին հայրենեաց սիրոյ սեղանոյն վերայ ուխտեն զիրեար սիրել. թո՛ղ մայրն իւր մատաղ զաւակին շրթանց Աստուծոյ անուան հետ Հայաստանի անունն թոթովել ուսուցանէ, և նորա փափուկ հոգւոյն մէջ Աստուծոյ սիրոյն հետ հայրենեաց սէրն դրոշմէ։ Թո՛ղ հայրենեաց սիրոյ առջև լռեն ամէն ոխ և կիրք, թո՛ղ ամէն հայ աչք առ հայրենիքս դարձնայ արցունք մի ունենալով յար նորա վիրաց վերայ կաթելոյ, ամէն հայ ձեռներ միահամուռ պատրա՛ստ լինին կարկառելոյ անդր ուր հայրենիք կը կոչէ, լոյս տանելոյ նորա խաւարին մէջ, յոյս նորա ցաւոց, և նեցուկ նորա տկարութեան։ Այն ատեն պիտի կերպարանափոխի Հայութիւնն և պիտի տեսնուի հայրենասիրութեան մի նոր հրաշքն։ Հայրենասիրութեան ստեղծագործ շունչն միայն կարէ կեանք տալ Հայութեան դօսացեալ ծառոյն, կանգնել վերակենդան հայրենի աւերակներն, հալեցնել Մասիսի սառերն, փարատել հայրենեաց երկինքն պատող սևաթոյր ամպոց քողն և վերստին բերել ՚ի Հայաստան վերածնութեան ու կենաց պայծառ գարունն...»։

Հայրենիքի սեր, ազգային ոգի. դպրո՛ցն է դարձյալ որ պիտի մտցնե այդ զգացումները մեր սրտերի մեջ։

«Երկու բանախօսութիւնք» (Պոլիս, 1880 թ.). Հայկական լսարաններում խոսված երկու ատենաբանություններ են, որոնց առաջինն է «Թշուառութիւն և գութ», երկրորդը՝ «Գեղեցիկն և գեղարուեստը»։ Գութի և գեղեցիկի զգացումները համարվում են մարդկային քաղաքակրթության երկու հզորագույն տարրերը. գութով պիտի անհետի տակավ

Թշվառությունը և մարդկությունը պիտի լինի երջանիկ. գեղեցիկի զգացմունքով պիտի զարգանան գեղարվեստն ու բանաստեղծությունը և նրանց հետ մարդու բարոյական զգայությունը։ Առաջին ատենաբանության մեջ իրար են հաջորդում թշվառության տեսարանների մի ամբողջ շարք. ճոխ ապարանքի դռան առաջ, ուր հարուստը շքեղ երեկույթ է տալիս, քաղցից մեռնող մի աղքատ, մի քիչ հեռու աղքատի թշվառ հյուղը, մի հիվանդ մանուկ, որ մեռնում է սոված մոր ծոցի մեջ սառած, մի պանդուխտ, որ հայրենիքից հեռու, մեռնում է օտարության մեջ, մի հանճարեղ պատանի, որ աղքատության պատճառով հասարակ արհեստավոր է դառնում, հրդեհ, սով, պատերազմի դաշտը, և այս բոլորին իբր դարման՝ Գութը։

Երկրորդ բանախոսության մեջ նկարագրում է Գեղեցիկն ու Վսեմը, նրանց սահմանը և իրար հետ ունեցած ներքին հարաբերությունը, արվեստները՝ ճարտարապետություն, քանդակագործություն, նկարչություն, երաժշտություն, բանաստեղծություն և նրանց կրթիչ նշանակությունը մարդկային ճակատագրի վրա։

Իբրև օրինակ, դնում ենք այստեղ Հրդեհը, որ առաջին բանախոսության մի պատկերն է.

«Այս գիշերուան մէջ երկինք մի անսովոր պայծառութեամբ կը փայլի արենագոյն. յուսահատութեան ձայներ կը լսուին.— հրդե՞հ կայ.— բոցք՝ դժոխային բազմագլուխ ճիւաղի մի խժախուժ մազերուն նման՝ կ'ոլորին վեր կը բարձրանան և կը լիզուն եթերային կամարն։ Մի հրեղէն գետ ողողեր է թաղն ողջոյն, կը վազէ մրմռալով իբր վիշապ գալարուն. իւր առջևէն կ'ընթանան արհաւիրք. իւր ժանիքն, իբրև թոյն, աղէտք կը ժայթէ իւր շուրջն։ Անյաղթելի է տարրն անողոք. այր և կին, մանուկ ու ծեր, ահաբեկ խուռներնթաց կը փախչին իւր առջևէն նորա համայնածախ կատաղութեան յանձնելով իւրեանց յարկն ընտանի. ի մէջն մի ականթարթ տուն մի կը կործանի ահաւոր շառաչմամբ, երջանկութիւն մի կը թռչի, ընտանիք մի կը փլի։ Աղեխարշ գոչիւններ կը խառնին բոցերու մռնչիւնին հետ և մի քստմնելի համանուագ կը կազմեն. և այս գոչիւններուն մէջ ձայներ կան որ ի զուր «օգնութի՜ւն» կ'աղաղակեն.— ա՜հ, թշուառներ են որ բոցերու հետ կը կռուին. և սակայն տարրն կոյր և անխիղճ կը լափի, զայն և կ'անցնի։ Մի քանի ժամ յետոյ հրդեհն կը հանգչի որպէս մի աշխարհակալ, որ կը դադարի յոգնած այն աւերներէն ու մահերէն, որովք իւր քայլերն նշանակեց։ Աւերակաց դէզք և ծխաշունչ մոխրակոյտք միայն կը մնան անտի որ մի գիւղ էր դուայլթ. թշուառներու խումբեր, ագափետուր բուերու նման, կը տեսնուին աստ անդ. սառած, քարացած են իւրեանց տանց մոխիրներուն առջև, կը հարցնեն իւրովի թե է՞ր հրոյն այդ ցասումն եղեռնագործ և թէ ինչո՞ւ, մինչ պահ մի յառաջ ընտանեկան յարկին տակ կը քնանային խաղաղ, անգէտք և երջանիկք, հիմայ իւրեանց գլխոյն կը պակսէր մի տեղի հանգստեան.— ո՜հ, գէթ, երբ ընտանեաց հայրն կը նայի իւր բոնաշղիկ ձագերուն վերայ որ, տխո՜ւր, կը ծուան իւր չորս դին, ամբո՜ղջ գտնէր զնոսա. բայց, յաճախ, այդ մոխրակոյտք գերեզմաններ են նաև... Ա՜հ, թշուառութի՜ւն...»։

«Կնոջ պատմութիւն»ն հոդվածների մի շարք է, որ տպված է «Երկրագունտ» հանդեսի մեջ 1883 թվին. այստեղ Պերպերյանը նկարագրում է կնոջ դրությունը հնագույն և վայրենի ժամանակներից սկսած մինչև ներկա քաղաքակիրթ դարը։ Կնոջ քաղաքակրթության պատմությունն է։

«Մարդիկ և իրք» (Պոլիս, 1885 թ.). պարունակում է հոդվածների այն շարքը, որ Պերպերյանը հրատարակել է Հրաչյա ծածկանունով «Երկրագունտ» հանդեսի մեջ 1883—1884 թվերին։ Նախաբանի մեջ հեղինակը մի գեղեցիկ խորհրդածություն ունի գրագետի կոչման վրա։— «Ինձ համար գրագիտութիւնը քահանայութիւն մ'է։ Գրագէտն օգտակար ըլլալու պարտականութիւնն ունի։ Իւր արուեստն պարտաւոր է դնել ի սպաս Բարւոյն և Արդարին, Ճշմարտութեան և Իրաւանց։ «Արուեստն արուեստին համար» նշանաբանը՝ կը հերքեմ ես։ Չեմ ընդունիր որ գրագէտն անտարբեր ըլլայ հանրային բարուց, լուսոյ և խաւարի կռւոյն, յառաջդիմութեան դատին։ Ընդհակառակն, պէտք է որ իբրև յառաջապահ զինուոր մարտնչի լուսոյ համար՝ խաւարին դէմ, իրաւանց համար՝ բռնաբարութեան դէմ, քաղաքակրթութեան համար՝ բարբարիկ յետադիմութեան դէմ։ Գրագէտը պաշտօն ունի մտաց խօսելու, սրտերն յուզելու, երևակայութիւնները վառելու. լա՛ւ ուրեմն, թո՛ղ լուսաւոր գաղափար մը դնէ մտաց մէջ, թո՛ղ ազնիւ յոյզ մ'արթնցնէ սրտից մէջ, թո՛ղ իտէալին զմայլումով հրապուրէ երևակայութիւնները։ Իւր գրիչը կրնայ վրձին մը դառնալ. իւր լեզուն կրնայ շանթ մ'ըլլալ. քա՛ջ է, թող օգտակարին, բարւոյն, ճշմարտին վրայ սփռէ իւր դիւթիչ երանգներն, թո՛ղ գոռոզ մոլութեան դէմ, թո՛ղ մատնչին ու յափշտակչին գլխուն վերայ տեղայ բարկաճայթ։ Գեղեցկին սիրահար է. թո՛ղ ի վեր հանէ ինչ որ կայ գեղեցիկ՝ անձնուիրութեան և

սիրոյ մէջ։ Վսեմ ըլլալ կը սիրէ. վսեմ զայրոյթներ կան, որպէս Յոբնաղի զայրոյթքն. թո՛ղ փրփրիլ գիտնայ անոնցմով։ Այս կերպով գրագէտը կը կատարէ իւր պարտքն առ ընկերութիւն, կը ծառայէ մարդկութեան։ Այդ պարտուց անտարբեր գրագէտն, որ միայն իւր մտահոգութեանց կը հետամտի, հաճելին կը խնդրէ լոկ առանց օգտակարը դնելու նորա տակ, կը բանաստեղծէ առանց փիլիսոփայելու, բացատրութեան ճշտութեանը միայն ուշադիր է՝ այլ ոչ բարոյականութեանն, արուեստին՝ այլ ոչ գաղափարին, կը կորուսանէ իւր մեծութիւնն, անհաւատարիմ կը լինի իւր կոչման. դասալիք զինուոր մ'է որ կը խուսափի պատերազմէն և կ'երթայ հեռուն՝ բլրոյ մը վերայ ընկողմանած՝ մի և նոյն աչօք դիտել բանակաց ընդհարումն և ամպերու արշաւն»։

«Մարդիկ և իրք»ը ներկայացնում է առօրյա հարցերի մասին արագ դրչով, գեղեցիկ, բայց ոչ սեթևեթյալ ոճով գրված խոսակցությունների մի շարք, որոնց մեջ քննվում և դատափետվում են հայոց էժան բարեգործությունը, սահմանադրության անվանական գոյությունը, կաթողիկոսական հարցը, այն սխալ կարծիքը, որով ազնվականությունը դրամական հարստություն է հասկացվում և ոչ թե մտքի բարձրություն, կանանց ազատագրությունը, կրոնավորի բարձը կոչման հակառակ, նրա անկյալ դրությունը, թե ճշմարիտ քրիստոնեությունը ձեվապաշտություն չէ, այլ հավատարմություն, եղբայրություն և սեր և այլն և այլն։ Սրանցից դուրս, առանձին գլուխներով խոսում է Տեմիրճիպաշյանի, Տիկին Տյուսաբի, Իփեկճյանի մանկավարժական գործունեության, Չիլինկիրյանի «Ուղևորութեան» և վերջապես Ներսես պատրիարքի մահվան առթիվ, նրա ցույց տված մեծ գործունեության վրա։ Այնուհետև գալիս են մի քանի կրթական ճառեր և դամբանականներ։

«Մարդիկ և իրք»ը առողջ հայացքներով մի գրվածք է. «Ժողովուրդն ծուլու ալիքներու պէս է և անապատի ասազներուն պէս է. հատերը տկար են, բայց նոցա մեծութիւնն մեծազօր է»։ Խոսելով Տեմիրճիպաշյանի մասին, դերասան է կոչում նրան, և դատապարտում է այն, որ անտեսում է իմաստը ձևի համար։ «Գրագէտ մը հրապարակի մէջ պարտի երևիլ ինչ որ է, պարզել ինչ որ ճշմարտութիւն կը հաստատայ, պնդել այն սկզբանց վերայ որոց համոզուած է, ունենալ մի դրոշ, ներկայացնել մի գաղափար, քարոզել զայն խանդով աւիւնով, թէպէտ և սխալի, թէպէտ և մոլորի, վասն զի ճշմարտութիւնն ա՛յն ատեն կրնայ երևան գալ, երբ ամէն հոգի կը մերկանայ անկեղծ ինչ որ կայ իւր մէջ, թէև այդու լքուի սրբութիւններէ կամ գիտուններէ, անհաճոյ լինի գեղեցիկ կամ տգեղ սեռին։ Ամէն տիրոջ ծառայել ամէն կուռքի երկրպագել, Որմզդին ու Ահրմանին առջև, միանգամայն խունկ ծխել՝ ոչինչ ընել, ոչինչ շինել է... Հրապարակագիր մը պարտի իւր համոզմանց արիութիւնն ունենալ, եթէ կ'ուզէ հանրութեան ծառայել, ապա թէ ոչ մի անօգուտ ու վաղանցիկ ձայն է որ ոչինչ ներգործութիւն կրնայ յառաջ բերել իւր ընթերցողաց մտաց ու սրտին վերայ, և իւր բարբառք որչափ քաղցրալուր ալ լինին՝ ընդհոսպ կը ցնդին ու կ'անհետին միջոցին մեջ»։

«Դրամ» (Պոլիս, 1886 թ.). մի փոքր տետրակ է, որ պարունակում է Պերպերյանի տնտեսագիտական բանախոսությունը այս նյութի մասին, խոսված Ասիական ընկերության լսարանում։

Դաստիարակի մը խօսքերը» (Վիեննա, 1901 թ.) պարունակում է 22 ճառ և 4 դամբանական. ճառերից մի մասը խոսված է Պերպերյան վարժարանի տարեկան հանդեսների առթիվ, իբրև «Հուսկ բանք», իսկ մյուսները ուրիշ զանազան դպրոցների և հանդեսների մեջ։ Բոլոր ճառերն էլ տոգորված են առողջ գաղափարներով և ունեն միայն մի՛ նպատակ, այն է պատրաստել ազնիվ ու շիտակ մարդ։ Կյանքի նպատակը երջանկությունն է. իսկ ի՞նչ է երջանկությունը.— խղճի անդորրություն. երբ մարդ կատարում է իր պարտականությունները դեպի Աստված, դեպի իր անձը և դեպի իր նմանները, նա երջանիկ է։ Կյանքի պայմաններն են հավատք, հույս և սեր, պետք է հավատանք առաջադիմության. չպետք է տարվենք Շոփենհաուրյան հոռետես գաղափարներով. ամենահուսահատ րոպեումն անգամ պիտի ունենանք հույսը, իսկ ընտանիքի և հայրենիքի սերը պիտի լինի ամենքին զորություն տվողը։ Մարդու կատարելությունը կայանում է հոգու կատարելության մեջ. բարձրացնենք մեր հոգին ուսումով, կրթությամբ, գաղափարի, սկզբունքի և գիտության մարդը դառնանք, մեր ես-ի մեջ զգանք ուրիշների ես-ը, և դա կջնջե մեր սրտից նախանձը, ատելությունը և ամեն չար զգացմունք։ Գործունեությունը կյանքի պայմանն է. և մարդը, որ ապրում է, պարտավոր է գործել։ Հաջողությունը հարատև ճիգերի արդյունքն է. ո՛չ մի ասպարեզ անպատիվ չէ կյանքի մեջ. անպատիվ է միայն ծուլությունն ու անգործությունը։ Երիտասարդությունը կյանքի փորձաքարն է. ով որ իր այս հասակի մեջ կարողացավ հսկել իր զգացմունքների վրա, ով կարողացավ նրանք հաշտ ու համաձայն պահել բանակա-

նության պահանջների հետ, նա՛ պիտի կարողանա մինչև իր կյանքի վերջը առողջ ու երջանիկ ապրել։ Պերպերյանը Գեղեցկի, Ճշմարտի ու Բարիի մեջ է փնտրում մարդկության իդեալը, մարդկային ցեղը ազնվացնելու միջոցը։ Բայց սրանք էլ պետք չէ վերցնել իբրև նյութական ըմբռնումներ. Գեղեցիկը զգայարանների հաճելին չէ, այլ կատարյալին մասնակի մարմնացումը. Բարին հաճույքը չէ, այլ պարտականության կատարումը՝ դեպի մեզ և դեպի ուրիշները։

«Խոհիմ և յուշիմ» (Վիեննա, 1904 թ.). ոտանավորների հավաքածու է, բոլորն էլ գրված են կնոջը մահվան առթիվ։ Այս մեծ կորուստի առաջ մեծ է բանաստեղծի ցավը. նա արտասվում է և կասկածը արարչության անարդարության դեմ սկսում է կրծել իր սիրտը. բայց նա չի հաղթվում, նա իր հավատքը չի կորցնում և համակերպելով երկնային պատգամին, տանում է համբերությամբ իրեն բաժին ընկած ցավը։

Ահա այս ոտանավորներից մի լավագույն նմուշ.

Հեռո՜ւն, հեռո՜ւն, ծփուն մշշի մը մէջէն,
Կը պատկերի հիմայ անցեալս իմ դէմ,
Երանութեան տարտամ անուրջ խաբուսիկ,
Ոսկի կապոյտ քողի տակէն ցոլացիկ։

Աղօտագիծ հոն նշմարեմ իմ ստուեր,
Որ, սիրազմայլ դեպ լոյս ոգի մ'է ծուեր,
Որոյ ձիւն ծոցն իր վարդ այտին բարձ առած՝
Կը քնանայ հրեշտակիկ մ'ստնդեաց։

Ես եմ, բայց ինձ ես կը թուիմ մի օտար,
Կնճռած իմ դէմք, ճերմկած իմ հերք, սիրտ խաւար,
Տանին ժպտուն պատկերն հեռուն, ա՜լ հեռուն,
Ու արցունքի կ'իջնէ սրտէս դառն առուն։

«Դպրոց և դպրութիւն» (Վիեննա, 1907 թ.). մի սովար հատոր է, որի մեջ հավաքված են զանազան թերթերում հրատարակված հոդվածներն ու ճառերը։ Բաժանվում է երկու մասի. առաջինն է Կրթական նյութեր, որտեղ քննում է դաստիարակության նպատակն ու եղանակները, մեր դպրոցների կրթական ծրագիրը, գրաբարի ուսումը, դպրոցական պատիժներ, ուսուցիչների պատրաստությունը, նրանց պարտականությունները, Ուսումնական խորհուրդ, նախնական կրթությունը մեր մեջ, բարոյական գիտություններ։ Սրանց հետևում են մի քանի դպրոցական ավարտական ճառեր, մի քանի աշակերտական երգեր, հարյուր բարոյական երկտողյակ առածներ։— Երկրորդ մասն է Գրական նյութեր. այստեղ խոսում է գրաբարի ու աշխարհաբարի վեճի մասին, նոր գրողների մասին, և վերջապես «վաղուան գրականութեան» մասին, որ վերջին ժամանակները հրապարակի վրա էր. մի խումբ գավառացի գրողներ, նյութ առնելով գավառական կյանքը, ձգտելով գործածել գավառի լեզուն ու ժողովրդական բարբառը, ուզում էին հիմ դնել մի նոր գրականության։ Պերպերյանը գտնում է որ դա կեղծիք է, անիրանալի մի բան։ Այս հոդվածներին հետևում են մի քանի կենսագրականներ, ոտանավորներ և այլն։

Այս բոլորից դուրս Պերպերյանը ունի մի քանի ուրիշ հոդվածաշարքեր, որոնք հրատարակված են զանազան թերթերում, բայց դեռ առանձին հատորներով լույս չեն տեսած. այսպես են «Գործ և գործող» (հրատարակված «Երկրագունտ» հանդեսի մեջ Հրահատ ծածկանունով), «Պտոյտ մը գալափարաց աշխարհին մէջ», «Ընտանեկանք» (անտիպ), որի մեջ նկարագրել է ընտանեկան կյանքի քաղցրությունը, երեք թարգմանություն՝ «Անիծեալը», Լամբնեի «Բանք հավատացելոյ ուրուք» և Կյոթեի «Հերման և Դորոթեա», և մի դպրոցական դասագիրք՝ «Համառօտ քաղաքական տնտեսութիւն»։

Ամփոփելով այս բոլորը, տեսնում ենք. որ Պերպերյանը եղել է հին սերունդի ազատամիտ ներկայացուցիչներից մեկը. նա իբրև բարի հայ և բարի հայր կանգնած է երկու սերունդների միջև. ո՛չ հների մոլեռանդ պահպանողականությունն ունի, և ո՛չ էլ նորերի համարձակ ու հանդուգն քայլերը. ինքը եղել է միշտ ազատամիտ բանակի աջ բազուկը։

Իր լեզուն և իր գրության ոճն էլ կրում են իր բնավորության պատկերը. իր առաջին գործերը, ինչպես տեսանք, աշխարհաբար անվան տակ գրաբար են, բոլորովին անհարմար արդի արվեստին ու ճաշակին։ «Երկու բանախօսութեանց» մեջ ճոխ ու պերճ է, թեև ծանր բառերով համեմված։ Քանի անցնում է ժամանակը, իր լեզուն էլ հետզհետե նրբանում, մոտենում է սովորական աշխարհաբարին. «Դպրոց և դպրութիւն» հատորի մեջ բռնում է միջին տեղը, մի լեզու, որ ո՛չ հին գրաբարյան լեզվի ծանրությունը ունի և ո՛չ նորերի աշխուժությունը. «Դաստիարակի մը խօսքերը»ի մեջ ավելի է ազնվանում, գեղեցկանում, իսկ «Խոհիմ և յուշիմ»ի մեջ այնքան է նորանում, որ տեղ տեղ կարծես աշուղական պարզուկ բանաստեղծական արվեստն ու լեզուն է ստանում։